ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Կոռուպցիայի դեմ պայքարի ամրապնդում ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում



Իրականացման ժամանակահատված: 01.02.2024 - 31.12.2026

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

Ընդհանուր բյուջե: € 3 500 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Open Government Partnership (OGP)

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: linkedin.com/company/12672246/, https://x.com/OECD_BizFin

Նախագծի կայքէջ: oecd.org/en/about/projects/acns-collaboration-with-the-eu.html

Նախագծի նկարագրություն

Արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությունները, կանխարգելման միջոցառումները և բարձր մակարդակի ու բարդ կոռուպցիայի դեմ պայքարը հիմնարար նշանակություն ունեն դիմակայուն պետությունների և հասարակությունների ձևավորման համար: Դրանք նաև Արևելյան գործընկերության (ԱԳ) հետ 2020 թվականից հետո ձևավորված օրակարգի առանցքային առաջնահերթություններից են:
«Կոռուպցիայի դեմ պայքարի ամրապնդում ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում» Գործողության նպատակն է աջակցել ԱԳ երկրներին իրավունքի գերակայությանը սպառնացող կոռուպցիոն վտանգների կանխարգելման և հաղթահարման գործում՝ նպատակային և համակարգային հակակոռուպցիոն բարեփոխումների միջոցով: Հենվելով «EU for Integrity» ծրագրի վրա, որը ՏՀԶԿ-ի կողմից իրականացվել է 2021–2023 թվականներին, Գործողությունը միտված է խթանել ապացույցների վրա հիմնված հակակոռուպցիոն քաղաքականությունների գործնական իրականացումը, ամրապնդել համապատասխան ինստիտուտները և ուժեղացնել իրավական կիրարկումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով բարձր մակարդակի և բարդ կոռուպցիայի դեպքերին: Սա կիրականացվի տարածաշրջանային երկխոսության, քաղաքացիական հասարակության մասնակցությամբ մոնիթորինգի խորացման, ինչպես նաև իրավապահ մարմինների և բիզնեսի ամբողջականության ոլորտներում փորձի փոխանակման և խորացված վերլուծության միջոցով:
Բաց կառավարման գործընկերության (OGP) հետ սերտ համագործակցությամբ Գործողությունը նաև նպատակ ունի հզորացնել պետական կառավարման և քաղաքացիական հասարակության շրջանակներում գործող

Ակնկալվող արդյունքներ:

Նպատակ 1
Նշանակալի արդյունքներ
Գործողությունների իրականացումը կնպաստի հետևյալ ակնկալվող արդյունքին.

Արևելյան գործընկերության երկրները ակտիվացնում են հակակոռուպցիոն բարեփոխումները հակակոռուպցիոն քաղաքականության, կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության կիրառման ոլորտներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով բարձր մակարդակի կոռուպցիային (ազդեցություն):
Հակակոռուպցիոն մարմինները և այլ համապատասխան դերակատարները կիրառում են ապացույցների վրա հիմնված մեթոդներ հակակոռուպցիոն քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում (արդյունք):

Նշանակալի ելքային արդյունքներ
- Տարեկան ՀԿՑ Ցանցի (ACN) լիագումար նիստեր (ներառյալ մոնիթորինգի և Ղեկավար խմբի հանդիպումները): IAP մոնիթորինգի 5-րդ փուլի զեկույցներ:
- Տարածաշրջանային հիմնական կատարողականի ցուցանիշներ (KPIs) ընտրված ոլորտների համար: